



ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈՆՄԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՍՎԱԾՆԵՐՈՒ ԶՈՂԸ¹⁾

ՏՅԱՌՆԱԿԱՆ ՄԱՍԱՂԸ

Տյառնական մասաղը կտարքերեր ու ղղրմության ու գոհության մատաղներին։ Տյառնականը կղուղեր անձի մը հաջողության կամ ձեռնարկի մը բարի վախճանին համար, զոր անձ մը կանխալ կիսոստանար Աստուծո կատարել։ Այս իմաստով զոհ մատուցանելլ քրիստոնեութենեն ալ հին է, ու խոստացված մատաղ մը ըլլալուն համար անոր զանցառությունը կհավասարեր երդմանազանցության, որ չատ մեծ հանցանք էր։ Հին ժամանակ Տյառնականի առաջին օրերը կնկատվելին կարապետի տոնը ու Աշխարհամատյան կիրակին օրը։ Հոգհաննես պատմաբան կաթողիկոսը կը պատմին, որ Աստոմ նահատակը ուխտած էր Սր. Գեորգա տոնին օրը Տյառնական պատարագ մատուցանել նոխազ մը զոհելով։ Տյառնականի սովորությունը զոյություն ուներ հին Հրեաներուն քով, որոնցմբ թերևս անցալ Հայաստան։ Հին Հունաստան, Հռոմ ունեին այս մատաղը։

ՆԵԶԵՑԵԼՈՅ ՃԱՇԵՐ

Քաղաքակիրթ թե վայրենի բոլոր հին աղջերը սովոր էին ննջեցելոց հիշատակին համար հասարակաց ճաշեր սարքելու։

Այս նախակողով սարքված Հրեական ճաշերու գոյությունը կիմանան Երեմիա մարդարեին «Սուլքի հացի» ու «Միսիթարության բաժակ»-ի ակնարկություններեն։

«Եւ մեռելի մը վրայով միսիթարություն տալու համար սուզի հաց պիտի ըրբաժանն ու անոնց հայրերուն ու մայրերուն համար միսիթարության բաժակը անոնց պիտի շնմցնեն» (Երեմիայի մարդարություն Գ. Յ. 62 —7)։

Հեթանոս Հայաստան նույն սովորության կհետևեր։ Ասոր առաջին օրինակը կտեսնենք Մաժան քրմապետին գերեզմանի շուրջ կատարված հոգեհանգստեան հավաքումներին ու հասարակաց ճաշերեն,

որոնք տեղի կունենային Տիգրան թաղավորին Հրամանով։ Մաժան քրմապետին Բաղինն ու անոր շուրջ սարքված հոգեհանգստեան ճաշկերութիւնները տեղի ունեցած էին Հայոց Սոյեմու կամ Խոսրով թագավորներուն Հրամանով (ըստ քննական տեսությանց), քանի որ այս երկուքը թագավորեցին 140-ին մինչև 216 թվականներուն միջև, այսինքն Խորենացիին ավանդած Տիգրանին (ոչ աշխարհակալը) շրջանին 151—193 թթ.)։ Իսկ եթե անպատճառ Տիգրան անում թագավորի մը փակադինք վերագրել Բագրինին հիմնարկությունն, այդ պարագային կրնանք Տիգրան 7-րդը ընդունել իբրև եղբայրը Մաժան քրմապետի, որ թագավորած է Քրիստոսի վերջ 60—61 թվականներուն։ Այս Տիգրանը Հրեաստանի Հերովդես Մեծի թոռան որդին էր ու հայոց Տիգրան անուն կրող թագավորներուն վերընը։ Խորենացին ալ իր պատմության մեջ

1) Սկիզբը տես «Եղմիածին», հունվ.-փետր., 1945 թ.

Մաժանի եղբայրը «Տիգրան վերջին» կան-
վանե, երբ կըսե. «Յորում պատմէ ի մեհե-
նիցն պաշտամանց, վերջին Տիգրանայ ար-
քայի հայոց պատուեալ զգերեղման եղ-
թօրն իւրոյ Մաժանայ քրմակեալի ի բար-
նացն աւանի, որ ի Բագրեւանդ դաւառի,
Բագին ի վերայ գերեղմանին շինեալ, զի
թ զոհիցն ամենայն անցաւորք վայելեսցին
եւ ընդունիցին հիւրք երեկօթիւք» (Տես
Խորենացիի Պատմությունը Բ. մաս, էջ
311):

Ննջեցեալներուն հոգվույն համար
սարքած այս ճաշը միակ փաստն է Հե-
թանոս Հայաստանի սովորության: Հեթա-
նոսական այս սովորությունը ամելի ազնը-
վացալ քրիստոնեության շրջանում: Հա-
յաստանյայց եկեղեցին ալ որդեգրեց այս
հին սովորությունը:

Թովմաս Արծրունին իր «Պատմութիւն
տանի Արծրունեաց» գրքին մեջ (9-րդ
դար) կպատմեն, որ Արծրունյաց Գագիկ
թագավորը իր Հանդուցյալ Գուրգեն եղ-
թոր հոգու համար պատարազներ ու գե-
նումի զոհեր կըատուցաներ ամեն տարի
(Թովմաս Արծրունի, «Պատմ. Տանն Արծրու-
նեաց, էջ 323—324):

12-րդ դարում հայ պատմիչ մը՝
Մատթեոս Պուհայեցին՝ իր պատմության
մեջ կհիշե, թե զող Վասիլի մահվան առ-
թիվ մատաղներ մորթիւցան:

Ներսես Շնորհալին իր «Ընդհանրա-
կան»-ին մեջ հայոց մատաղին մասին խոսե-
լով կը դորձածե «զի դաշտատոն կերակրե-
լով ողորմութիւն դատին նոքա յիստու-
ծոյց բառերը: Ստեփաննոս Օրբելյան իր
«Պատմութիւն տանն Միսական» գրքին մեջ
(13-րդ դար) կհիշատակե Պենտեկոստեի
օրը և միաբաններու սարքած հոգեհան-
դատյան զուարակներուն ու գառնուկներուն
ճաշերը, որոնք աղքատներու ու կարստ-
յալներու պետք կըացնեին (էջ 361—362):

Հոգեհանդակնեան ճաշերը հին ժամա-
նակները տեղի կունենային դերեղմաններու
չուրջ. այսպես կընեին եղիպտացիները ու
Հրեաները ու այսպես ըրավ նաև հելլեն
Աքիլեսը Պատրոկլեսի մահվան առթիվ.

նույնն ըրավ նույնպես Մեծն Ալեքսանդրը
Դարես Կողոմանոս թաղավորին համար:
4-րդ դարում հոռմեացիք, անտիոքիք ու
Փոքր Ասիո քրիստոնյաները հոգեհանդա-
յան ճաշերը եկեղեցիու ու գալիթներուն
մեջ կը սարքեին:

Հայկական հեթանոսության օրերուն
հոգեհանդատյան ճաշերը գերեղմաններուն
չուրջ կլազմակերպվեին: Հայտատանի քը-
րիստոնեության ըրջանին այս սովորու-
թյունը պահպեցալ, հետևելով մյուս քը-
րիստոնյաներու սովորության ու սույն
ճաշերը Տյառնական ճաշերուն նման կը
սարքվին եկեղեցիներուն ու գալիթներուն
մեջ, ինչպես կիւայի Շնորհալին «Ընդ-
հանրական»-ին մեջ:

Տաթևացին կպատմեն, որ վանքերու
կամ եկեղեցիներու դափիթին մեջ այս տե-
սակ ճաշերը հարմար չըլլալով սկսան դե-
րեղմանի շուրջ ճաշել, որովհետեւ սույն
ճաշերին ընթացքին սեղանին նյութն էին
մսեղեններ, արմտիքներ ու գինին, որ
կաշեցներ կոչնականները, որոնք լալազին
ճայներով կերպեին նման հեթանոսական
օրերուն սովորության պատմելով նաև
մնջեցյալներուն առավելությունները: Կոչ-
նականները, ընդհանրապես, կըլլային աղ-
քատ ու թշվառ հրամիթյալները, ինչպես
որ Արծրունին իր պատմության մեջ կա-
վանդեն, որ Գագիկ թագավորին հոգեհա-
ցին մեջ ներկա էին «աղքատաց», «որդե-
րու», «այրիներու», «տնանկներու» ու
գտառապյալներու դասակարգը:

Անառունը զոհին համար մորթելեն ա-
ռաջ իսացին առջև աղ կղնեին, կարդ մը
սաղմուններ կերպեին ու նույն աղը անա-
սունին կերցնելեն վերջ կմորթեին ու կե-
փեին:

Գինիին սովորությունն ու երգերը հա-
յերե զատ ուրիշ աղքեր ալ ունեին:

Կարդելունացիներն ու ասորեստանցի-
ները աղապներու ժամին կործածեին
դայն ու կարսեին: Գինիին սովորությունը
կառարյալ հեթանոսական էր: Հին հելլեն
ները, ինչպես որ տեսանք, մեռներու գե-

բեղմանի վրա կթանքեին զայն, ինչու որ ըրավ Աքիլես դյուցադնը, որ Պատրովկլեսի մարմինը այրելու առոր խարույկի շուրջը գետինը կթափեր ու մեռյալին հոգին կուչեր (տես Հոմերոսի «Իլիական»-ը էջ 416):

Հայ կիները ունեին իրենց մասնավոր ննջեցյալներու օրը, որ կանվանվեր «Խաչի ուրբաթ»: Այս սեղանին կմասնակցեին միայն կիներու դասակարգը: Այդ օրը հանդուցյալի աղքականները ճաշի կհրավերեին իրենց սեռակիցները, որովհետև կանանց համար սովոր չէր հասարակաց ընդհանուր կոչանքներուն մասնակցել, բացի չքալոր այրիներեն, որոնք կինային միայն աղքատներու հետ հողեհանդստյան ճաշերուն երթալ:

Հայ կիներու այս մասնավոր ճաշի սովորությունը մեղ կավանդե Հովհաննես Երգնակացին:

Կովը թրը մատաղ սեղան չէր բերվեր: Հին հայերը կովը կը նկատեին իրը խոր խալարի մեջ բնակվող «վիշապակերպ» կենդանի մը:

Ներկված հավկիթներու դորժածությունը շատ հին է:

Հին եզիպտոսի, Հունաստանի ու Հոռոմի մեջ գարնան սկիզբը աստվածներու ձև կոմիթեին իրը խորհրդանշան արդասավորության:

Պարսկաստանի ու Հնդկաստանի մեջ ձուն նվիթական կը համարվեր ու աշխարհի ստեղծման ավանդությանց հետ կապված էր անոր ալ ավանդությունը: Հրեաները հավկիթը իրենց պատեքին մեջ կը ճաշին, իսկ պարսկեները ձուն գունավորելու իրարու կրնացեին: Եվրոպան ևս հիներեն ժոռանգեց այս առջորությունը: Միջին գարուն այլազան կրոնական նկարներով ու գործերով զատկի առիթին ձու կններեին Եվրոպայի մեջ:

Հայեր ալ այս սովորության հետևած են ու կարմիր համեկիթը զատկի սիրական սովորությունը դարձավ:

Տաթևացին իր քարոզությունների մեջ կարմիր ձուն խորհրդականվոր կնկատե ու բո-

լոր աշխարհի հետ կհամեմատե հետեւյալ ձևով: Զուն կնմանի բովանդակ աշխարհին: Անոր կեղեւը կնմանի երկնքին, մաշկը կնմանի օդին, սպիտակուցը ջրին ու գեղվնը՝ երկրին: Գալով հավկիթը կարմիր ներկով դունավորելու սովորության՝ այս կնշանակե, թե ըրուր աշխարհ Քրիստոնի արյունով գննեցավ ու երբ կարմիր ձուն ձեռքներիս առնենք; մեր վրկության համար քարոզած կամ աղոթած կըլլանք:

Հեթանոսական ու հրեական սովորությունը հայ մատաղները պետք էին անսպաման որք ըլլային, կննդանին դոհութիւն առաջ աղ կերցնելու սովորությունը տեղի կունենար նաև հին հրեաներուն քով: Նախապես կզոհվեր տարիքոտ ոչխարը, բայց հետո գառնուկը նկատվեցավ դոհի հաբակաղակույն կենդանին: Հայը ու հրեան դոհի արյունով կններկեին իրենց սեմերը, ինչպես որ հրեան իր դոհերեն բաժին էրաներ զետացիներուն, հայն ալ դոհի բաժին կուտար իր հեթանոս քուրմերուն ու քրիստոնյաց մեջ:

Շատ մը գիծերով հայկական հին սովորությունները կնմանին հրեական սովորություններուն: Հեթանոսությունը շատ գեղարացավ բաժնիթիլ Հայաստանին ու անոր ինչ-ինչ սովորությունները պահպեցան հայոց մեջ:

Դոհի կենդանին որք ըլլալե առաջ պետք է ըլլար սպիտակ ու անոր գլուխը ու մարմինը պաճուծանեներով կղարդարեին:

Լատիններն ալ ունեին իրենց կարգ մը ինքնահատուկ սովորությունները: օրինակ՝ Սբ. Աղնեսի հիշատակին մեջ կծանոթանանք: որ պատարագը դեռ չավարտած երկու ողջ գառնուկներ եկեղեցվու սեղանի վրա կդրվեին, կօրհնվեին ու անկե վերջ անոնց բուրդեն կշինվեին իրենց եկեղեցիներուն եմիկորոնները:

Բաղեկնդանի իրախճանքը մնացորդ է հին աղդերու ունեցած հին հաճոյալի սովորություններուն, որոնք աստվածներու նվիթած հատուկ օքեր ունեին: Այն օքերուն մեջ կրնային համարձակորեն ամեն տնսակ զեղսություններ գործեն: Այս կար-

դի տոնակատարությունները հին հոռմանց-
վոց «սատունական» ու հունաց «դիմոնի-
սական» ըսլած տոներն էին։ Այս տոնական
հանդեսները փոխվեցան քրիստոնեության
բարեկենդանին։

Մանդակունին հայոց բարեկենդանը
կնկարագրե մեծ պահոց մանելե առաջ տնդի
ունեցած բազմանոխ սեղանները բացատրե-
լով, ուր ամեն տեսակ որդրամոլություն,
արքեցություն ու շոայլություններ տեղի
կունենային, ոքոնք կգերազանցեին ուրիշ
առթիվ եղած բոլոր մյուս խրախճանքները։
Հայոց մեջ բարեկենդանը կտեսներ անընդ-
հառ երկու շաբաթ։

Պահոց պահելու սովորությունը հին
հրեական սովորություն մըն է ու դատա-
վորաց ժամանակեն ի վեր կգործածվեր
Հրեաստանի մեջ։

Շաբաթվա երկու օրերը պահոց պահելու
սովորությունը ևս հրեական էր։ Հրեանե-
րը միայն շաբաթական երկուշաբթին ու
հինգշաբթին պահոց կապահեին, մինչ քրիս-
տոնյանները այս օրերը փոխանցին չորեք-
շաբթին և ուրբաթին, նվիրագործելու
համար Հիսուսին մատնության ու մահվան
հիշատակները։

Ծոմ պահելու սովորությունն ալ առ-
նըված է Սուրբ գիրքն։ Ծոմ բառը առնը-
ված է երբայական «ծոմ» ու աստրական
«ծոմա» հոմանիշներն։ Հրեաները ունեին
միօրյա, երեքօրյա ու յոքնօրյա ծոմի կա-
նոններ։

«Թագաւորաց»-ի մեջ (թ) կկարդանք.

«Եվ անոնք Սալուղի համար ու անոր
որդույն՝ Հովհանթանի համար եւ Տիրողը
ժողովուրդին համար ու խրայելի տան հա-
մար սուզ բռնեցին ու լացին ու մինչեւ ի-
րիկուն ծոմ բռնեցին անոնց սուրով իյնա-
լուն համար» (Տես Գլ. Ա.)։

Եսթերի դրքին մեջ կկարդանք.

«Ինձի համար ծոմ պահեցե՞ք, գիշեր
ցերեկ երեք օր մի՛ ուստե՞ք ու մի՛ իմնե՞ք»
(Գլ. Դ.)։

«Առաջին թագավորաց»-ին մեջ գըր-
ված է։

«Եվ անոնց սակորները առին ու Հարված

մեջ ծառին տակ թաղեցին ու 7 օր ծոմ
պահեցին» (Տես Գլ. Ա.):

Այս վկայությունները ցույց կտան,
որ ծոմի գաղափարը հրեական է։ Հայոց
մեջ երկար ծոմեր պահելու սովորություն
մալ ընդունված էր։ Լուսավորիչին համար
կարածվի, որ բոլոր իր կյանքին մեջ քա-
ռասուն օրեր ծոմ պահած էր (Ագաթանգե-
ղոս)։

10-րդ դարուն ապրող Մովսես անուն
ճշնավորի մըն ալ քառասուն օր ծոմ պա-
հելու հիշատակությունը կընե Ասողիկ։

Երբեմն ալ հայ ժողովուրդը թագա-
վորի մը մեղքերուն համար պահոց կպահեր։
Փակտոս բյուզանդացին կպատմե, որ երբ
Արշակ թագավոր հիմնեց Արշակալիան քա-
ղաքը Մեծ Ներսես զայն ապաշխարության
հորդորեց։

Հին հավատացյալները սովոր էին նաև
թշնամյաց հարձակումներուն դեմ պաշտ-
պանվելու համար երկնից օգնությունը
խնդրել մասնավոր պահոցներ պահելով։ Աս
ալ հրեական սովորություն մըն էր։ Մնա-
ցորդացին մեջ (Բ) կկարդանք, թե հրե-
աներուն չովսափատ թագավորը ասորոց
գալստյան լուրը առնելով բոլոր ժողովուր-
դին հրամայեց պահոց բռնել։ Հայոց մեջ ալ
նման օրինակներ կան։

Երբ անգամ մը մարդութները Վրթա-
նես կաթողիկոսին ժամանակ ակսան ասպա-
տակել Հայաստանի մեջ, Հայրապետը հա-
մայեց պահոց պահել ու Աստուծմե օգնու-
թյուն խնդրել։

Վարդանանց ժամանակ ալ եկեղեցի
պահոցի հրավեր կարդաց ժողովրդյան։

Նվիրական գործերը հաջողությամբ
կարգադրելու համար սովորություն կար
նախարարն պահոց բռնել։ Կիրակոս ճշնավո-
րը թաղեռու առաջելին նշխարները գտնե-
լու տենչանքով 30 օր պահոց պահեց։ ուրիշ
առթիվ մալ ամբողջ չորս ամիսներ պահոց
պահեց նույն նպատակի համար։

Մեր նախահայրերը, երբ անգամ մը
փարեցան քրիստոնեության, ջանալիքը ե-
ղան ամոռը բոլոր կանոնները ու եկեղեցու

օրենքները պահելու, նույնիսկ հաճախ կովելու դրսավոր թշնամիներու դեմ:

Երբ անդամ մը Խվանե Մեծ էշխանին որդին՝ Ավագը, թաթար զորապետին բանակը գնաց, իրեն առջև բերին «ոսուրբ» ու զանառուրբ» անասուններու միսեր ու շինուկ ձիու կաթ: Թաթարները սկսան մեծ ափորժակով ուտել ու խմել, բայց Ավագ ու իր ընկերները ուտելե հրաժարվեցան, պատասխանելով որ քրիստոնյաները սովոր չեն այսպիսի կերակուրներ ուտելու (Տես կերակոս Գանձակեցին):

Հին հայերը ունեին նաև բազմաթիվ նախապաշտումներ: Կը հիշեմ անոցմե քանի մը հատ միայն:

Եթե մեկը դիմումածով ծառե մը իյնալով մեռներ և կամ ծառի մը վրա կախվելով անձնասպան ըլլար, այդ ծանր մեղավոր չէր համարվեր, բայց լավ կը լլար, որ ծառը իսկույն կտրվեր, որպեսզի անոր պատուլը ոչ-ոք ուտեր: Բայց եթե նույն ծառին աղմատեն նոր մը բումներ, անոր պատուլը կրնար ճաշակելի համարվել:

Եթե կիներ կամ քահանաներ որս ըսունեին, այդ որսը պետք էր չան առջև ձգել, որովհետեւ անոնց ներելի չէր արյուն թափել: Բայց կնոջ մը կամ քահանայի մը որշացած ձուկը ընդունելի էր, որովհետեւ ձուկը անարյուն կենդանի մըն էր²⁾:

Հին հայոց հեթանոսական չառ մը սովորությունները շարունակվեցան պահվել քրիստոնեության ընթացքին ու առիպիցանք աստիք թվել պարզապես հեթանոս

հայերու այլաղան սովորություններուն վրա լավագույն դադափարն աւնենալու համար:

Անասուններ զուկելու սովորությունը մինչեւ այսօր պահված է հայերու մոտ: Երբեմն օտար հեղինակներ կը փափառվին քննադատել հայկական այս հեթանոսական սովորության շարունակությունը, մինչդեռ նույն սովորության կը հետեւին եկեղեցիները մինչեւ միջին դար ըստ Կոնիքերի¹⁾:

Քրիստոնյա հույններ, լատիններ, վրացիներ ու ասորիներ, հար և նման հայ աղդին քրիստոնեության առաջին դարերուն մեջ բազում անդամներ զոհեր մատուցած են Աստծո: Բայց այս սովորությունը դադրած էր իրենց մեջ միջին դարում ու հետեւկարար մոռացության ենթարկվեցավ բոլորովին: Հայաստանյաց Մայր եկեղեցին, ինչպես չառ մը ուրիշ դեպքերու մեջ ալ հնավանդ սովորություններ պահած է, զուկեր մատուցանելու այս սովորությունը մինչեւ այսօր կը շարունակ դեռ պահէլ, որմե կօգուզին աղքատներն ու անկյալները:

Հեթանոսության անհետացումն վերջ քրիստոնեությունը նոր դարագլուխ մը բացալ Հայաստանի մեջ:

Այս շրջանին ունեցանք մեր այրութենը, մեր ծագկյալ գրականությունը ու անրիծ և իղեալապաշտ բարոյական վերելքը, որուն բարձրագույն հանգրվանին կհասնին միայն այն ժողովուրդները, որոնք իրենց մեջ կիսացնեն կրոնքի, հայրեասիրության ու մտավոր արդյունավոր զարդացման երրյակ սրբությունները:

1) Review de L'Hist. de Religions, 1901.

2) Նույն

